Կազմված է 11.08.2021թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՄԱՄԲ
/արձանագրություն թիվ 02/

«Միացյալ Հայաստան» կուսակցության
կառավարման խորհրդի նախագահ
Երվանդ Յուրիկի Թարվերդյան

_____

Տպագրված է 2 օրինակից

Օրինակ _____

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ

«_____»_____2021թ.

Գրանցման համար _____

ՀՎՀՀ _____

Պետական ռեգիստրի գործակալության
աշխատակից

_____

«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևան 2021թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Միացյալ Հայաստան» կուսակցությունը (այսուհետ՝ Կուսակցություն) ազգային գաղափարախոսությամբ, պետական շահերը սպասարկող և ազգի գերագույն նպատակներին ծառայող կուսակցություն է:

2. Կուսակցությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամավոր անդամության հիման վրա ստեղծված հասարարական միավորում է, որն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, սույն կանոնադրության, ինչպես նաև Կուսակցության ծրագրին համապատասխան:

3. Կուսակցության գործունեությունը հիմնվում է անդամության կամավորության, անդամների իրավահավասարության, սեռից, ռասայից, մաշկի գույնից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից կախված խտրականության արգելման, կուսակցության անկախության, ինքնակառավարման, կոլեգիալության, գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների վրա:

4. Կուսակցության՝ որպես իրավաբանական անձի իրավունակությունը ծագում է պետական գրանցման պահից և այդ պահից Կուսակցությունը գործում է ժողովրդավարության, հրապարակայնության, թափանցիկության և նախաձեռնությունների ազատ դրսևորման սկզբունքներով, օգտվում Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքներից և կրում Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված պարտականություններ:

5. Կուսակցության անվանումն է՝

1) հայերեն՝ «Միացյալ Հայաստան» կուսակցություն (հապավումը՝ ՄՀԱԿ),

2) ռուսերեն՝ Партия “Объединённая Армения” (հապավումը՝ ПОАР),

3) անգլերեն՝ “United Armenia” Party (հապավումը՝ UARP):

6. Կուսակցությունն ունի կնիք և խորհրդանշան:

7. Կուսակցության խորհրդանշանը կարմիր, կապույտ և նարնջագույն հիմնագույնով հայ ազգի միասնականության և ամբողջականության հավերժանշանն է՝ կարմիր և կապույտ գույների բաժանված և իրար լուսնաձև անցումներով միացող «Մ» մեծատառով և ամբողջովին նարնջագույն հիմնագույն ունեցող «Հ» մեծատառով:

8. Կուսակցության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Արշակունյաց 3Ա շենք:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Կուսակցության նպատակն է Սահմանադրությամբ, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով, «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով /այսուհետ՝ օրենք/ և այլ օրենքներով՝ ժողովրդավարական ընտրությունների միջոցով ապահովել իր ներկայացվածությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ մասնակցելով պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը, պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

10. Կուսակցության խնդիրներն են.

1) պահպանել և ամրապնդել Հայոց անկախ պետականությունը, որդեգրել պետականության ամրությանը սպառնացող ցանկացած մարտահրավերի չեզոքացմանն ուղղված արդյունավետ ռազմավարություն,

2) առողջացնել քաղաքական դաշտը, ստեղծել իրավահավասար պայմաններ քաղաքական ուժերի համար,

3) ձևավորել նոր մշակույթ պետական կառավարման համակարգում՝ կարևորելով անձի մասնագիտական որակները՝ վստահության և (կամ) կուսակցական պատկանելիության փոխարեն,

4) խստագույնս տարանջատել և անկախացնել դատական համակարգը գործադիր և օրենսդիր իշխանություններից,

5) բարենպաստ պայմաններ ստեղծել տնտեսության կայուն զարգացումն ու քաղաքացիների բարեկեցությունն ապահովելու համար՝ առաջնորդվելով «Կայուն տնտեսություն», հզոր պետություն կարգախոսով,

6) վերացնել տնտեսական մենաշնորհները, վերանայել և բարեփոխել օրենդրական դաշտը,

7) տնտեսության ճյուղերում ապահովել պետական մասնակցությունն ու շահաբաժինը,

8) վերաարժևորել Հայաստան-Սփյուռք հարաբերությունները և որպես մեկ ամբողջականություն՝ կենտրոնացնել և ի շահ պետության օգտագործել համայն հայության մտավոր, տնտեսական, մարդկային ներուժը,

9) ապահովել և աջակցել Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնություններին իրենց իրավունքների պաշտպանությունը, ազգային ինքնությունը և ավանդույթները պահպանելու համար:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

11. Կուակցության կառուցվածքային մարմիններն են՝

1) Կուսակցության համագումարը,

2) Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը՝ Կուսակցության կառավարման խորհուրդը,

3) Կուսակցության վերահսկողություն իրականացնող մարմինը՝ Կուսակցության վերահսկիչ հանձնաժողովը,

4) Կուսակցության նախագահը,

5) Կուսակցության փոխնախագահը,

6) Կուսակցության տարածքային ստորաբաժանումները:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

12. Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինը Կուսակցության համագումարն է, որը հրավիրում է Կուսակցության կառավարման խորհուրդը 3 /երեք/ տարին մեկ անգամ:

13. Կուսակցության կառավարման խորհրդի, վերահսկիչ հանձնաժողովի կամ Կուսակցության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ /պահանջով/ կարող է հրավիրվել արտահերթ համագումար: Արտահերթ համագումար հրավիրելիս ներկայացվում են նաև համամագումար հրավիրելու անհրաժեշտությունը և օրակարգը: Կուսակցության կառավարման խորհուրդը արտահերթ համագումար հրավիրելու պահանջը քննարկում է այն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում և նշանակում արտահերթ համագումարի օրը և ժամը:

14. Համագումարի օրակարգը Կուսակցության անդամներին ծանուցվում /հայտնվում/ է համագումարի օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ:

15. Կուսակցության համագումարն իրավազոր է, եթե համագումարին ներկա է կուսակցության անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը, իսկ համագումարին պատվիրակների մասնակցության դեպքում՝ պատվիրակների ընդհանուր թվի առնվազն կեսը, բայց ոչ պակաս, քան 100 պատվիրակ:

16. Կուսակցության համագումարի բացառիկ իրավասություններն են՝

1) Կուսակցության կանոնադրության հաստատումը և ծրագրի ընդունումը, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելը.

2) Կուսակցության կառավարման խորհրդի և վերահսկիչ հանձնաժողովի ընտրությունը.

3) Կուսակցության կառավարման խորհրդի նախագահի ընտրությունը, ինչպես նաև Կուսակցության կառավարման խորհրդի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

4) Կուսակցության վերակազմակերպումը.

5) Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակում թեկնածուների՝ առնվազն առաջին երեք տասնյակի հաստատումը:

17. Համագումարն ունի նաև հետևյալ լիազորությունները.

1) ընտրում է Կուսակցության նախագահին, ինչպես նաև որոշում է ընդունում Կուսակցության նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

2) հաստատում է Կուսակցության կառավարման խորհրդի գործունեության մասին և վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունները,

3) որոշում է ընդունում Կուսակցության լուծարման մասին:

18. Կուսակցության համագումարն իրավասու է քննարկելու իր որոշմամբ սահմանված ցանկացած հարց, որի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը օրենքով կամ սույն կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի:

19. Համագումարում ընտրված բոլոր մարմինները հաշվետու են համագումարին:

20. Կուսակցության համագումարը վարում է Կուսակցության կառավարման խորհրդի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ կառավարման խորհրդի կողմից որոշված անձը: Համագումարում բաց քվեարկությամբ ձևավորվում է հաշվիչ հանձնաժողով՝ կազմված առնվազն 3 անդամից և ընտրվում է համագումարի քարտուղար:

21. Կուսակցության համագումարին յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Կուսակցության անդամը, բաց քվեարկության ժամանակ, իր համար նախընտրելի «Կողմ», «Դեմ» կամ «Ձեռնպահ» տարբերակը հնչեցնելու դեպքում բարձրացնում է ձեռքը /մանդատը/: Եթե քվեարկության ժամանակ որևէ մասնակից «Դեմ» կամ «Ձեռնպահ» չի քվեարկում, ապա համարվում է որոշումը միաձայն ընդունված:

22. Կուսակցության համագումարի որոշումները, բացառությամբ «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով նախատեսված դեպքերի, ընդունվում են համագումարում ձայնի իրավունք ունեցող ներկաների ձայների մեծամասնությամբ: Կուսակցության կանոնադրությունում կամ ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու, կառավարման խորհրդի կամ վերահսկիչ հանձնաժողովի ընտրության, կառավարման խորհրդի նախագահի ընտրության, Կուսակցության վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշումներն ընդունվում են համագումարի ձայնի իրավունք ունեցող մասնակիցների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

23. Համագումարում գաղտնի քվեարկությունը կազմակերպվում է քվեաթերթիկների միջոցով՝ վարկանիշային ընտրության սկզբունքով: Առաջադրված թեկնածուների անունը, հայրանունը և ազգանունը, ըստ այբենական հերթականության, լրացվում է քվեաթերթիկում: Կուսակցության յուրաքանչյուր անդամ, ընտրություն իրականացնելիս, նշում է Կառավարման խորհրդի անդամների թվաքանակը չգերազանցող համապատասխան թեկնածուի անվան դիմաց: Կառավարման խորհրդի անդամների թվաքանակից ավել անուն պարունակող քվեաթերթիկը անվավեր է: Կառավարման խորհրդի յուրաքանչյուր անդամի թեկնածուի անվան դիմաց ամեն մի նշում համարվում է մեկ ձայն: Քվեարկության արդյունքում ամենաշատ ձայներ

ստացած թեկնածուները համարվում են ընտրված Կառավարման խորհրդի անդամներ: Եթե առաջադրված առաջադրված թեկնածուների քանակը ավել չէ սույն կանոնադրությամբ սահմանված քանակից, ապա քվեաթերթիկում նախատեսվում է նաև «Բոլորին կողմ եմ» տարբերակը: Ընտրված, բայց ինքնաբացարկ հայտնած անդամին փոխարինում է ցուցակում հաջորդ տեղ գտած թեկնածուն: Գաղտնի քվեարկությունը կազմակերպում, անցկացնում և արդյունքներն ամփոփում է հաշվիչ հանձնաժողովը: Գաղտնի քվեարկության կազմակերպման, անցկացման և ամփոփման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը սահմանում է կառավարման խորհուրդը:

24. Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով պատվիրակներ ընտրելու դեպքում, համագումարն ացնկացվում է պատվիրակների մասնակցությամբ: Պատվիրակն ընտրվում է երկու տարի ժամկետով՝ Կուսակցության անդամների կողմից: Պտվիրակ կարող է ընտրվել միայն Կուսակցության անդամը: Յուրաքանչյուր կուսակցության անդամ կարող է ընտրել միայն մեկ պատվիրակ: Ընտրության կամահայտնությունը ձևակերպվում է վստահագրով: Պատվիրակների ընտրության համար նախատեսված ժամանակահատվածում Կուսակցության անդամը սույն կանոնադրությամբ նախատեսված քանակի կուսակցության անդամների վստահագրեր է ստանում և ներկայացնում կառավարման խորհուրդի նախագահին, որի որոշմամբ կուսակցության անդամը ճանաչվում է պատվիրակ: Վստահագրի մեջ նշվում է պատվիրակի և կուսակցության անդամի անունը, ազգանունը, ամսաթիվը, ինչպես նաև կուսակցության անդամի ստորագրությունը: Կարող է կազմվել նաև խմբային վտահագիր:

25. Պատվիրակների քանակը սահմանվում է՝

1) մինչև 2000 /երկու հազար/ անդամ ունենալու դեպքում՝ 50 /հիսուն/,

2) 2001-ից /երկու հազար մեկից/ մինչև 5000 / հինգ հազար/ անդամ ունենալու դեպքում՝ 200 /երկու հարյուր/,

3) 5001 /հինգ հազար մեկ/ և ավել անդամ ունենալու դեպքում՝ 500 /հինգ հարյուր/:

26. Պատվիրակների ընտրության համար նախատեսված ժամանահատվածի առաջին օրվա դրությամբ կուսակցության անդամների քանակը բաժանվում է սույն կանոնադրության 25-րդ կետի 1-3 ենթակետերից մեկում նշված համապատասխան թվին: Ստացված քանորդը համարվում է պատվիրակի ընտրության համար անհրաժեշտ ձայների /վստահագրերի/ քանակ /պատվիրակի ձայնը ներառյալ/: Ոչ ամբողջ թիվ ստանալու դեպքում թիվը կլորացվում է դեպի ներքև:

27. Պատվիրակները համագումարում քվեարկում են սույն կանոնադրության 21-23-րդ կետերով սահմանված կարգով:

5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

28. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը Կուսակցության կառավարման խորհուրդն է, որը կազմված է 11 /տասնմեկ/ անդամից: Կառավարման

խորհրդի անդամները վարկանիշային ընտրության սկզբունքով Կուսակցության կազմից ընտրվում են համագումարում, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով՝ երեք տարի ժամկետով: Կառավարման խորհրդի անդամների թեկնածուներն առաջադրվում են ընտրությունների օրվանից ոչ շուտ, քան 10 /տաս/ և ոչ ուշ քան 5 /հինգ/ օր առաջ՝ ինքնաառաջադրման կամ Կուսակցության առնվազն 15 /տասնհինգ/ անդամի կողմից առաջադրման եղանակով:

29. Կառավարման խորհրդի անդամն իրավունք ունի՝

1) հանդես գալ հայտարարություններով,

2) ներկայացնել առաջարկություններ,

3) ծանոթանալ նիստի բոլոր նյութերին,

4) առարկել կառավարման խորհրդի այլ անդամի /այդ թվում՝ կառավարման խորհրդի նախագահի/ գործողությունները:

30. Կառավարման խորհրդի անդամը պարտավոր է՝

1) մասնակցել կառավարման խորհրդի նիստերին,

2) պահպանել նյութերի գաղտնիությունը,

3) կատարել կառավարման խորհրդի որոշումները:

31. Կառավարման խորհորդն ունենում է նիստեր, որոնց արդյունքում ընդունում է որոշումներ: Անհրաժեշտությունից ելնելով՝ կառավարման խորհրդի նիստը կարող է անցկացվել նաև հեռավար՝ հաղորդակցության միջոցների կիրառմամբ:

32. Կառավարման խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են կառավարման խորհրդի նախագահի կողմից՝ հաստատված օրակարգով, յուրաքանչյուր 3 /երեք/ ամիսը մեկ անգամ: Կառավարման խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել կառավարման խորհրդի անդամների մեկ երրորդի կամ Կուսակցության առնվազն հիսուն անդամների նախաձեռնությամբ: Կառավարման խորհրդի անդամները կառավարման խորհրդի նիստի օրակարգի, նիստի տեղի, օրվա և ժամի մասին պատշաճ կարգով ստանում են ծանուցում՝ ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից 3 /երեք/ օր առաջ:

33. Կառավարման խորհրդի նիստն իրավազոր է, եթե հրավիրվել է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և նիստին մասնակցում են կառավարման խորհրդի առնվազն 7 /յոթ/ անդամ: Կառավարման խորհրդի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է կառավարման խորհրդի կողմից որոշված անձը:

34. Կառավարման խորհրդի նիստն արձանագրվում է, որտեղ արտացոլվում են նաև նիստում քվեարկության արդյունքները: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, պարզ, թղթային եղանակով: Նիստի արձանագրումը կազմակերպում է կառավարման խորհրդի նախագահը:

35. Կառավարման խորհուրդը՝

1) Կուսակցության անունից հանդես է գալիս հայտարարություններով և առաջարկներով,

2) հաստատում է Կուսակցության տարեկան բյուջեն,

3) Կուսակցության նախագահի առաջարկությամբ՝ հաստատում է Կուսակցության ռազմավարությունը, ընդունում է գործողությունների ծրագրեր,

4) հաստատված տարեկան բյուջեի հիման վրա հաստատում է Կուսակցության ծախսերի նախահաշիվը,

5) Կուսակցության անունից կնքում է քաղաքացիաիրավական գործարքներ,

6) փոփոխություններ է կատարում համագումարի կողմից Ազգային ժողովի ընտրությունների համար հաստատված ընտրական ցուցակներում, եթե համագումարի կողմից հաստատվելուց հետո ընտրական ցուցակում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունն առաջացել է Կուսակցության կամքից անկախ պատճառներով,

7) հաստատում է Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով ընտրվող համայքների ավագանիների ընտրություններում Կուսակցության ընտրական ցուցակները թեկնածուների այն մասով, որոնց հաստատումը օրենքով կամ սույն կանոնադրությամբ վերապահված չէ համագումարին, ինչպես նաև հերթական և արտահերթ ընտրություններում Կուսակցականների դաշինքի ընտրական ցուցակը,

8) որոշում է ընդունում Կուսակցության տարածքային ստորաբաժանում ստեղծելու և տարածքային ստորաբաժանման գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ, ինչպես նաև հաստատում է տարածքային ստորաբաժանումների կանոնակարգերը,

9) հաստատում է Կուսակցության էթիկայի կանոնները,

10) որոշում է կայացնում Կուսակցության անդամությունից հեռացնելու մասին,

11) հաստատում է Կուսակցության անդամների հաշվառելու կարգը և պայմանները,

12) նշանակում է Կուսակցության խոսնակին,

13) հաստատում է Կուսակցության կառավարման խորհրդի կանոնակարգը,

14) հաստատում է Կուսակցության հաստիքացուցակը, ինչպես նաև ներքին աշխատանքային կանոնակարգը,

15) որոշում է ընդունում այլ պետությունների քաղաքական կուսակցությունների հետ համագործակցելու, միջազգային միություններին և ասոցիացիաներին անդամագրվելու մասին,

16) իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված այլ լիազորություններ:

36. Կառավարման խորհուրդի որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե օրենքով կամ սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Կառավարման խորհրդի յուրաքանչյուր

անդամ /ներառյալ կառավարման խորհրդի նախագահը/ ունի մեկ ձայն: Կառավարման խորհրդի անդամը նիստին մասնակցում և քվեարկում է անձամբ:

37. Կառավարման խորհուրդը կարող է կազմալուծվել համագումարի որոշմամբ: Կառավարման խորհուրդը պարտավոր է Կուսակցության անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով հրավիրել համագումար՝ կառավարման խորհրդի կազմալուծման հարցով: Կառավարման խորհրդի կողմից սույն կետում նշված գրավոր պահանջը ստանալուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում համագումար հրավիրելու մասին որոշում չկայացնելու դեպքում /ընդ որում՝ համագումարը չի կարող նշանակվել պահանջ ներկայացնելու օրվան հաջորդող վաստուն օրվանից ոչ ուշ/, պահանջ ներկայացրած անձանց լիազոր ներկայացուցիչը հրավիրում է համագումար՝ կառավարման խորհրդի կազմալուծման հարցով: Համագումարի կողմից կառավարման խորհրդի կազմալուծման մասին որոշում կայացնելու օրվան հաջորդող տասներորդ օրը համարվում է հրավիրված համագումար՝ կառավարման խորհրդի նոր անդամներ ընտրելու օրակարգով: Կազմալուծված կառավարման խորհրդի նախագահը շարունակում է պաշտոնավարել մինչև նոր կառավարման խորհրդի ձևավորման օրը:

38. Կուսակցության անունից այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում հանդես է գալիս կառավարման խորհրդի նախագահը՝ առանց լիազորագրի: Կառավարման խորհրդի նախագահի կողմից ներկա գտնվելու անհնարինության կամ այլ դեպքերում կառավարման խորհուրդն ընտրում է լիազորված անձ:

39. Կառավարման խորհրդի նախագահն ընտրվում է համագումարի կողմից՝ երեք տարի ժամկետով:

40. Կառավարման խորհրդի նախագահը՝

1) առանց լիազորագրի ներկայացնում է Կուսակցություն և հանդես է գալիս նրա անունից, տալիս է Կուսակցության անունից հանդես գալու լիազորագրեր,

2) Կուսակցության անունից կնքում է քաղաքացիաիրավական գործարքներ՝ Կուսակցության համագումարի կողմից հաստատված բյուջեի շրջանակներում,

3) նախագահում է համագումարը,

4) կազմակերպում և նախագահում է կառավարման խորհրդի նիստերը,

5) Կուսակցության անդամին նշանակում է կառավարման խորհրդի նիստերի քարտուղար,

6) Կուսակցության անունից՝ իր իրավասության սահմաններում ստորագրում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

41. Կուսակցության վերահսկողություն իրականացնող մարմինը վերահսկիչ հանձնաժողովն է, որը հետևում է Կուսակցության մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն կանոնադրության, Կուսակցության էթիկայի

կանոնների, ինչպես նաև համագումարի և կառավարման խորհրդի կողմից կայացված որոշումների կատարմանը:

42. Վերահսկիչ հանձնաժողովի կազմը բաղկացած է 3 /երեք/ անդամից: Վերահսկիչ հանձնաժողովի անդամներն ընտրվում են Համագումարի կողմից, բաց քվեարկությամբ, 3 /երեք/ տարի ժամկետով: Վերահսկիչ հանձնաժողովի անդամների թեկնածուներն առաջադրվում են ընտրությունների օրվանից ոչ շուտ, քան 10 /տաս/ և ոչ ուշ, քան 5 /հինգ/ օր առաջ, ինքնաառաջադրման կամ Կուսակցության առնվազն 15 անդամի կողմից առաջադրման եղանակով:

43. Վերահսկիչ հանձնաժողովը իր կազմից ընտրում է նախագահ՝ բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ, որը վերահսկում և համակարգում է հանձնաժողովի աշխատանքները:

44. Վերահսկիչ հանձնաժողովի անդամը չի կարող միաժամանակ լինել Կուսակցության կառավարման խորհրդի անդամ:

45. Վերահսկիչ հանձնաժողովը՝

1) իրականացնում է Կուսակցության մարմինների գործունեության ստուգումներ՝ ինքնուրույն որոշելով ստուգման շրջանակները և ժամանակահատվածը,

2) Կուսակցության մարմնից կարող է պահանջել ցանկացած բնույթի փաստաթղթեր և տեղեկություններ, ինչպես նաև ծանոթանալ Կուսակցության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին,

3) վերահսկում է կուսակցության դրամական միջոցների ձևավորման և ծախսման գործընթացները, ստուգում է դրամական միջոցների մուտքերի և ելքերի օրինականությունը,

4) վերահսկում է կուսակցության գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման գործընթացները,

5) կազմում է Կուսակցության տարեկան բյուջեի կատարման մասին եզրակացություն,

6) առաջարկություն է ներկայացնում Կուսակցության մարմնի կողմից կատարված խախտումը վերացնելու վերաբերյալ,

7) հարուցում է կարգապահական վարույթ Կուսակցության անդամի նկատմամբ, իրականացնում է կարգապահական վարույթը և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում կիրառում է կարգապահական տույժեր,

8) Կուսակցության անդամին Կուսակցությունից հեռացնելու հարցով դիմում է կառավարման խորհրդին,

9) Իրականացնում է օրենքով և սույն կանոնադրութմաբ սահմանված այլ լիազորություններ:

46. Վերահսկիչ հանձնաժողովը սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորություններն իրականացնում է նիստերում որոշումներ ընդունելու միջոցով: Վերահսկիչ հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե նիստին մասնակցում է

հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Որոշումները համարվում են ընդունված, եթե կողմ է քվեարկել հանձնաժողովի առնվազն 2 /երկու/ անդամ: Վերահսկիչ հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հանձնաժողովի կողմից որոշված մեկ այլ անդամ:

47. Վերահսկիչ հանձնաժողովի նախագահը ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, որոշումները, պահանջները, առաջարկությունները և այլ փաստաթղթեր:

48. Վերահսկիչ հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝

1) ներկայացնել առաջարկություններ,

2) ծանոթանալ վարույթի բոլոր նյութերին,

3) առարկել հանձնաժողովի այլ անդամի գործողությունները:

49. Վերահսկիչ հանձնաժողովի անդամը պարտավոր է՝

1) մասնակցել վերահսկիչ հանձնաժողովի նիստերին և քվեարկությանը,

2) պահպանել նյութերի գաղտնիությունը,

3) կատարել հանձնաժողովի որոշումները:

50. Վերահսկիչ հանձնաժողովը հաշվետու է Կուսակցության համագումարին:

51. Վերահսկիչ հանձնաժողովը կարող է կազմալուծվել համագումարի որոշմամբ:

7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

52. Կուսակցության նախագահին ընտրվում է Համագումարի կողմից, 3 /երեք/ տարի ժամկետով: Կուսակցության նախագահի թեկնածուներն առաջադրվում են ընտրությունների օրվանից ոչ շուտ, քան 10 /տաս/ և ոչ ուշ, քան 5 /հինգ/ օր առաջ, ինքնաառաջադրման կամ Կուսակցության առնվազն 15 անդամի կողմից առաջադրման եղանակով:

53. Կուսակցության նախագահը՝

1) իրականացնում է Կուսակցության ընդհանուր ղեկավարումը,

2) կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կուսակցության աշխատողների հաստիքացուցակը և դրույքաչափերը,

3) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Կուսակցության աշխատակազմի հաստիքային աշխատողներին,

4) իր իրավասության սահմաններում որոշումներ է ընդունում Կուսակցության գործունեության ընթացիկ հարցերի վերաբերյալ և ստորագրում է հրամաններ, կարգադրություններ և անհրաժեշտ այլ փաստաթղթեր, Կուսակցության անունից կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր,

5) կառավարման խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Կուսակցության տարեկան բյուջեն և դրամական ծախսերի նախահաշիվները,

6) համագումարին հաշվետվություն է ներկայացնում Կուսակցության գործունեության, կառավարման խորհրդի կողմից հաստատված տարեկան բյուջեի և դրամական ծախսերի նախահաշիվների վերաբերյալ,

7) ապահովում է համագումարի, կառավարման խորհրդի որոշումների կատարումը,

8) տնօրինում է Կուսակցության գույքը և դրամական միջոցները,

9) իրականացնում է սույն կանոնադրությամբ և Կուսակցության համագումարի կողմից իրեն վերապահված այլ լիազորություններ:

8. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԸ

54. Կուսակցության փոխնախագահին ընտրվում է Կառավարման խորհրդի կողմից, իր կազմից՝ բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ, 3 /երեք/ տարի ժամկետով:

55. Կուսակցության փոխնախագահին աջակցում է Կուսակցության նախագահին՝ վերջինիս լիազորությունների արդյունավետ իրականացման համար: Կուսակցության փոխնախագահը Կուսակցության նախագահի հանձնարարությամբ կատարում է կազմակերպչական աշխատանքներ, պատասխանատու է նիստերի արձանագրման համար:

56. Կուսակցության փոխնախագահը Կուսակցության նախագահի բացակայության ժամանակ փոխարինում է նրան:

9. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

57. Կուսակցության տարածքային ստորաբաժանումները ստեղծվում են տարածքային հատկանիշներով՝ Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում:

58. Տարածքային ստորաբաժանումները ստեղծվում և դրանց գործունեությունը դադարեցվում է կառավարման խորհրդի որոշմամբ:

59. Տարածքային ստորաբաժանման ղեկավար մարմինը տարածքային ստորաբաժանման խորհուրդն է, որը հրավիրվում է 3 /երեք/ տարին մեկ անգամ: Տարածքային ստորաբաժանման խորհուրդի անդամներն ընտրվում են տվյալ տարածքային ստորաբաժանման սպասարկման տարածքում հաշվառված Կուսակցության անդամների կողմից՝ բաց քվեարկությամբ, քվեարկության մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, 3 /երեք/ տարի ժամկետով: Տարածքային ստորաբաժանման խորհրդի թեկնածուներն առաջադրվում են ինքնաառաջադրման կամ տվյալ տարածքային ստորաբաժանման սպասարկման տարածքում հաշվառված Կուսակցության առնվազն 5 անդամների առաջադրման եղանակով:

60. Տարածքային ստորաբաժանման խորհուրդի կազմը բաղկացած է 5 /հինգ/ անդամից, որոնցից մեկը, բաց քվեարկությամբ և քվեարկության մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, ընտրվում է տարածքային ստորաբաժանման խորհրդի նախագահ: Տարածքային ստորաբաժանման խորհրդի նախագահի թեկնածուներն առաջադրվում են ինքնաառաջադրման կամ տարածքային ստորաբաժանման խորհրդի առնվազն 2 /երկու/ անդամների առաջադրման եղանակով:

61. Տարածքային ստորաբաժանամ խորհուրդը՝

1) ղեկավարում և համակարգում է տարածքային ստորաբաժանման ընդհանուր գործունեությունը,

2) կառավարման խորհրդին հաշվետվություն է ներկայացնում տարածքային ստորաբաժանման գործունեության վերաբերյալ,

3) ընդունում է որոշումներ տարածքային ստորաբաժանմանը վերաբերող ցանկացած հարցի կապակցությամբ՝ բացառությամբ այն հարցերի, որոնք սույն կանոնադրությամբ վերապահված են համագումարի և կառավարման խորհրդի բացառիկ իրավասությանը,

4) կառավարման խորհրդին առաջարկում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում Կուսակցության կողմից առաջադրվող կամ պաշտպանվող թեկնածուների և ավագանու ընտրությունների համամասնական ցուցակները,

5) կառավարման խորհրդին է ներկայացնում տարածքային ստորաբաժանման խորհրդի նախագահի պաշտոնանկության հարցը:

62. Տարածքային ստորաբաժանման խորհրդի անդամն իրավունք ունի՝

5) հանդես գալ հայտարարություններով,

6) ներկայացնել առաջարկություններ,

7) ծանոթանալ նիստի բոլոր նյութերին,

8) առարկել տարածքային ստորաբաժանման խորհրդի այլ անդամի /այդ թվում՝ խորհրդի նախագահի/ գործողությունները:

63. Տարածքային ստորաբաժանման խորհրդի անդամը պարտավոր է՝

4) մասնակցել տարածքային ստորաբաժանման խորհրդի նիստերին,

5) պահպանել նյութերի գաղտնիությունը,

6) կատարել տարածքային ստորաբաժանման խորհրդի որոշումները:

64. Տարածքային ստորաբաժանման խորհրդի նախագահը՝

1) ղեկավարում է տարածքային ստորաբաժանման խորհրդի գործունեությունը,

2) կազմակերպում և նախագահում է տարածքային ստորաբաժանման խորհրդի նիստերը,

3) տարածքային ստորաբաժանման խորհրդի անունից կառավարման խորհրդին հաշվետվություն է ներկայացնում տարածքային ստորաբաժանման գործունեության,

տարածքային ստորաբաժանմանը հատկացված գույքի օգտագործման և կառավարման վերաբերյալ,

4) համակարգում և կազմակերպում է Կուսակցությանն անդամակցելու նպատակով տարածքային ստորաբաժանում դիմած քաղաքացիների դիմումների ներկայացման աշխատանքները:

65. Տվյալ տարածքային ստորաբաժանման սպասարկման տարածքում հաշվառված Կուսակցության անդամների կողմից բաց քվեարկությամբ, քվեարկության մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, Կուսակցության անդամներից մեկն ընտրվում է տարածքային ստորաբաժանման վերահսկողություն իրականացնող մարմին՝ վերահսկիչ, 3 /երեք/ տարի ժամկետով: Վերահսկիչի թեկնածուներն առաջադրվում են ինքնաառաջադրման կամ տվյալ տարածքային ստորաբաժանման սպասարկման տարածքում հաշվառված Կուսակցության առնվազն 5 անդամների առաջադրման եղանակով: Վերահսկիչը չի կարող միաժամանակ լինել տարածքային ստորաբաժանման խորհրդի անդամ:

66. Վերահսկիչը վերահսկողություն է իրականացնում տարածքային ստորաբաժանման կանոնադրական և ֆինանսական գործունեության նկատմամբ, և այդ նպատակով իրավունք ունի պահանջել և ստանալ տարածքային ստորաբաժանման գործունեությանն առնչվող ցանկացած փաստաթուղթ և տեղեկատվություն: Վերահսկիչը պարտավոր է իր կողմից իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ եռամսյակային հաշվետվություն ներկայացնել կառավարման խորհրդին և վերահսկիչ հանձնաժողովին, ինչպես նաև եզրակացություն տալ տարածքային ստորաբաժանման գործունեության, ֆինանսական միջոցների ու գույքի օգտագործման (տնօրինման) հաշվետվության վերաբերյալ:

67. Տարածքային ստորաբաժանման խորհորդն ունենում է նիստեր, որոնց արդյունքում ընդունում է որոշումներ: Տարածքային ստորաբաժանման խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են տարածքային ստորաբաժանման խորհրդի նախագահի կողմից՝ հաստատված օրակարգով, յուրաքանչյուր 3 /երեք/ ամիսը մեկ անգամ: Տարածքային ստորաբաժանման խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել կառավարման խորհրդի նախաձեռնությամբ կամ տարածքային ստորաբաժանման խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով: Տարածքային ստորաբաժանման խորհրդի անդամները նիստի օրակարգի, նիստի տեղի, օրվա և ժամի մասին պատշաճ կարգով ստանում են ծանուցում՝ ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից 3 /երեք/ օր առաջ:

68. Տարածքային ստորաբաժանման խորհրդի նիստն իրավազոր է, եթե հրավիրվել է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և նիստին մասնակցում են տարածքային ստորաբաժանման խորհրդի առնվազն 3 /երեք/ անդամ: Տարածքային ստորաբաժանման խորհրդի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է տարածքային ստորաբաժանման խորհրդի կողմից որոշված անձը:

69. Տարածքային ստորաբաժանման խորհուրդի որոշումներն ընդունվում են, եթե կողմ են քվեարկել տարածքային ստորաբաժանման խորհրդի առնվազն 3 /երեք/ անդամներ: Տարածքային ստորաբաժանման խորհրդի յուրաքանչյուր անդամ /ներառյալ խորհրդի նախագահը/ ունի մեկ ձայն: Տարածքային ստորաբաժանման խորհրդի անդամը նիստին մասնակցում և քվեարկում է անձամբ:

70. Տարածքային ստորաբաժանման խորհրդի նիստն արձանագրվում է, որտեղ արտացոլվում են նաև նիստում քվեարկության արդյունքները: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, պարզ, թղթային եղանակով: Նիստի արձանագրումը կազմակերպում է տարածքային ստորաբաժանման խորհրդի նախագահը:

10. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

71. Կուսակցությանն անդամակցությունը կամավոր է և անհատական:

72. Կուսակցության անդամներ կարող են լինել տասնութ տարին լրացած ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք ընդունում են սույն կանոնադրությունը և Կուսակցության ծրագիրը և չե հանդիսանում մեկ այլ կուսակցության հիմնադիր:

73. Կուսակցության հիմնադիրները Կուսակցության պետական գրանցումից հետո օրենքի ուժով դառնում են Կուսակցության անդամներ:

74. Կուսակցության անդամակցությունը կատարվում է քաղաքացու դիմումի հիման վրա՝ կառավարման խորհրդի որոշմամբ: Քաղաքացու անդամակցության դիմումը քննարկվում է այն ստանալու օրվանից՝ 30 /երեսուն/ օրվա ընթացքում: Կառավարման խորհուրդը մերժում է քաղաքացու անդամակցության դիմումը, եթե քաղաքացին կամ նրա դիմումը չի համապատասխանում «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և /կամ/ սույն կանոնադրության պահանջներին:

75. Կուսակցությանն անդամությունը դադարում է՝

1) Կուսակցության անդամի դիմումի հիման վրա՝ դիմումը ներկայացնելու օրվանից,

2) Կուսակցությունից հեռացվելու դեպքում՝ կառավարման խորհրդի որոշման հիման վրա,

3) Կուսակցության անդամի մահվան դեպքում՝ կառավարման խորհրդի նախագահի որոշման հիման վրա,

4) Կուսակցության լուծարման դեպքում:

76. Սույն կանոնադրության 75-րդ կետի՝

1) 1-ին ենթակետում նշված դիմումը պետք է պարունակի տեղեկություն Կուսակցությունից դուրս գալու մասին, ինչպես նաև ստորագրված լինի Կուսակցության անդամի կողմից,

2) 2-րդ ենթակետում նշված կառավարման խորհրդի որոշումը կայացվում է վերահսկիչ հանձնաժողովի դիմումի /առաջարկության/ հիման վրա,

3) 3-րդ ենթակետում նշված որոշումը կայացվում է Կուսակցության անդամի մահվան փաստի մասին տեղեկացվելուց անմիջապես հետո,

4) 4-րդ կենթաետում նշված դեպքում Կուսակցության անդամների անդամությունը համարվում է դադարեցված Կուսակցության լուծարման պահից:

11. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

77. Կուսակցության անդամներնն իրավունք ունեն՝

1) ընտրելու և ընտրվելու Կուսակցության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում, ինչպես Կուսակցության ներկայացուցչական մարմիններում և տարածքային ստորաբաժանումների ղեկավարներ,

2) ներկա լինել Կւոսակցության համագումարի նիստերին անձամբ կամ պատվիրակի միջոցով,

3) ծանոթանալ Կուսակցության մարմինների արձանագրություններին, ստանալ փաստաթղթերի պատճեններ նրանց ընդունած որոշումների վերաբերյալ,

4) ստանալ փաստաթղթերի պատճենը՝ Կուսակցության կանոնադրության կամ ծրագրի փոփոխությունների, գույքի կառավարումից ստացած դրամական միջոցների վերաբերյալ,

5) տեղեկատվություն ստանալ կուսակցության ու նրա ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ,

6) ստանալ Կուսակցության ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացությունը,

7) կուսակցության ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել հասարակական-քաղաքական կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ նախաձեռնություններ և առաջարկություններ,

8) մասնակցել այն նիստերին, որտեղ քննարկվում է նրա անձնական հարցը կամ առաջարկությունը, արտահայտել իր կարծիքը քննարկվող հարցերի վերաբերյալ, ներկայացնել բացատրություններ և ապացույցներ,

9) բողոքարկել Կուսակցության մարմինների որոշումներն ու գործողությունները /անգործությունը/,

10) կամովին դադարեցնել և վերականգնել իր անդամակցությունը Կուսակցությանը.

11) օգտվել օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

78. Կուսակցության անդամները պարտավոր են՝

1) գործել Կուսակցության կանոնադրության և ծրագրի շրջանակներում,

2) կատարել Կուսակցության մարմինների որոշումները,

3) մասնակցել Կուսակցության համագումարին և միջոցառումներին, ինչպես նաև պատվիրակների ձևավորմանը,

4) նպաստել Կուսակցության նպատակների և խնդիրների իրականացմանը,

5) կատարել օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

12. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻԱՌՎՈՂ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

79. Կուսակցության անդամը օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև Կուսակցության էթիկայի կանոնները խախտելու դեպքում կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության հետևյալ միջոցների՝

1) նկատողություն,

2) խիստ նկատողություն,

3) Կուսակցությունից հեռացում:

80. Կարգապահական վարույթը հարուցվում է կառավարման խորհրդի նախագահի կամ վերհսկիչ հանձնաժողովի որոշմամբ: Կարգապահական վարույթը հարուցվում է՝

1) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց բողոքների /դիմումների/ հիման վրա,

2) զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա,

3) կամ սեփական նախաձեռնությամբ:

81. Կարգապահական վարույթն իրականացնում է վերահսկիչ հանձնաժողովը՝ 30 /երեսուն/ օրվա ընթացքում:

82. Կարգապահական վարույթի իրականացման արդյունքում վերահսկիչ հանձնաժողովը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) կարճել կարգապահական վարույթը,

2) Կուսակցության անդամին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ նկատողություն կամ խիստ նկատողություն հայտարարելու միջոցով,

3) Կուսակցության անդամին հեռացնելու հարցով դիմել կառավարման խորհրդին:

83. Կուսակցության անդամին հայտարարվում է խիստ նկատողություն, եթե նա առաջին անգամ է թույլ տվել սույն կանոնադրության կամ Կուսակցության էթիկայի կանոնների պահանջների խախտում, որն իր բնույթով կոպիտ չէ:

84. Կուսակցության անդամին հայտարարվում է խիստ նկատողություն, եթե նա երկրորդ անգամ է թույլ տվել սույն կանոնադրության կամ Կուսակցության էթիկայի կանոնների պահանջների խախտում, որն իր բնույթով կոպիտ չէ:

85. Կուսակցությունից հեռացնելու մասին որոշումն ընդունվում է, եթե Կուսակցության անդամը կոպիտ կերով խախտել է սույն կանոնադրության կամ Կուսակցության էթիկայի կանոնների պահանջները կամ մեկ տարվա ընթացքում առնվազն երկու անգամ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Սույն կետի իմաստով կոպիտ խախտում է համարվում այն խախտումը, որը հակասում է սույն կանոնադրությանը կամ Կուսակցության էթիկայի կանոններին և վնաս է պատճառում կամ կարող է պատճառել Կուսակցության բարի համբավին:

86. Կուսակցության անդամին Կուսակցությունից հեռացնելու մասին որոշումն ընդունում է կառավարման խորհուրդը՝ վերահսկիչ հանձնաժողովի դիմումի /առաջարկության/ հիման վրա, որը քննարկվում է 30 /երեսուն/ օրվա ընթացքում:

87. Կուսակցության անդամին նկատողություն կամ խիստ նկատողություն հայտարարելու մասին վերահսկիչ հանձնաժողովի որոշումը Կուսակցության անդամը կարող է բողոքարկել կառավարման խորհուրդ՝ այն ստանալու հաջորդ օրվանից՝ 10 /տաս/ օրվա ընթացքում:

88. Կուսակցության անդամին կարգապահական վարույթ հարուցելու մասին և կարգապահական վարույթի արդյունքներով ընդունված համապատասխան որոշումները պատշաճ կարգով ուղարկվում /հանձնվում/ են Կուսակցության անդամին՝ որոշումն ընդունելու օրվանից՝ եռօրյա ժամկետում:

13. ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

89. Կառավարման խորհուրդը հաստատում է Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով ընտրվող համայքների ավագանիների ընտրություններին կուսակցության ընտրական ցուցակների ձևավորման կարգը՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի և սույն կանոնադրության պահանջների:

90. Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով ընտրվող համայքների ավագանիների ընտրություններին մասնակցելու դեպքում Կուսակցության ընտրական ցուցակները ձևավորվում են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով ընտրական ցուցակներին ներկայացվող պահանջներին համապատասխան՝ կառավարման խորհրդի կողմից:

91. Կուսակցության համապետական և տարածքային ընտրական ցուցակների թեկնածուներին կառավարման խորհրդի քննարկմանը կարող է առաջադրել

կառավարման խորհրդի անդամը: Ընտրական ցուցակների ձևավորման ժամանակ հաշվի են առնվում նաև Կուակցության անդամների, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների ներկայացրած առաջարկությունները:

92. Թեկնածուների հարցը քննարկելիս պետք է հաշվի առնվեն նաև «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված պահանջները /այդ թվում՝ սահմանափակումները/, այդ թվում՝ ըստ ընտրողների ռեգիստրի այդ ընտրական տարածքում ընդգրկված որոշակի թվով քաղաքացու հաշվարկով նախատեսված թվով թեկնածուների, յուրաքանչյուր սեռի ներկայացուցչի թվի, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, ինչպես նաև ցուցակների մասերի հետ կապված պահանջները:

93. Կուսակցության համապետական և տարածքային ընտրական ցուցակները հաստատվում և առաջադրվում են կառավարման որոշմամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Համապետական և տարածքային ընտրական ցուցակների բոլոր էջերը կնքում և ստորագրում է կառավարման խորհրդի նախագահը կամ նրան փոխարինող անձը:

94. Ազգային ժողովի հերթական ընտրություններում Կուսակցության ընտրական ցուցակում թեկնածուների՝ առաջին երեք տասնյակի ցանկը հաստատում է Կուսակցության համագումարը:

14. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

95. Սույն կանոնադրությունում կամ Կուսակցության ծրագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կուսակցության համագումարի կողմից՝ կառավարման խորհրդի ներկայացմամբ:

96. Սույն կանոնադրությունում կամ Կուսակցության ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համագումարի որոշման նախագիծը կազմվում և հավանության է արժանանում կառավարման խորհրդի կողմից, որից հետո միայն յան կարող է ներկայացվել համագումարի քննարկմանը և հաստատմանը /ընդունմանը/:

15. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

97. Սույն կանոնադրությամբ և Կուսակցության ծրագրով սահմանված նպատակների իրականացման համար Կուսակցությունը սեփականության կամ այլ գույքային իրավունքով կարող է ունենալ ցանկացած գույք:

98. Կուսակցության գույքը գոյանում է՝

1) օրենքով նախատեսված կարգով բյուջետային ֆինանսավորումից,
2) օրենքով սահմանված նվիրատվություններից,
3) օրենքով սահմանված գործունեությունից ստացված եկամուտներից:

99. Կուսակցության անդամը սեփականության իրավունք չունի Կուսակցությանը պատկանող գույքի նկատմամբ: Կուսակցության գույքի նվիրատվությունն արգելվում է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

100. Կուսակցությունն իր գույքով պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, Կուսակցության անդամն իր գույքով պատասխանատվություն չի կրում Կուսակցության պարտավորությունների համար:

101. Կուսակցությունը կարող է ունենալ բանկային հաշիվներ միայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող՝ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկերում:

102. Կուսակցությունը բոլոր դրամական վճարումները կատարում է անկանխիկ հաշվարկներով:

16. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

103. Կուսակցության վերակազմակերպումը (միաձուլվելը, միանալը, բաժանվելն ու առանձնանալը) կատարվում է համագումարի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կուսակցությունը կարող է վերակազմակերպվել (միաձուլվել, միանալ, բաժանվել, առանձնանալ) միայն այլ կուսակցության (կուսակցությունների):

104. Կուսակցության լուծարումը կատարվում է համագումարի որոշմամբ՝ օրենքով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

105. Եթե Կուսակցության լուծարման համար հրավիրված համագումարն իրավազոր չէ, ապա Կուսակցության լուծարման մասին որոշումն ընդունում է կառավարման խորհուրդը, իսկ կառավարման խորհրդի իրավազոր չլինելու դեպքում Կուսակցությունը լուծարվում է Կուսակցության հիմնադիրներից մեկի որոշմամբ: Այս դեպքում Կուսակցության լուծարման մասին որոշումը համարվում է ընդունված, եթե որոշումը կայացնելու օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում, Կուսակցության համագումարը կամ կառավարման խորհուրդը այլ որոշում չի կայացրել:

106. Լուծարման դեպքում Կուսակցության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը ուղղվում է Կուսակցության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե: